

ԱՆԱՏԻՏ

ԷՄԵՂԵՍ ԱՄՍԵԱՅ

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ, ԳԵՂԱՐՈՒԵՑԱԿԱՆ

Ա. ՏԱՐԻ

ՀՈԿՏԵՄԲԵՐ 1899

ԹԻԻ 12

ՎԵՆԵՏԳԻ ՄԻԽԻՍԱՐԵԱՆԵՐԸ

Ռըվիւ Աննիֆրքէսիֆին մէջ Հայոց արգելադրականութեան մասին վերջերս հրատարակած յօդուածիս առիթով, Բազմալիպը հետեւեալ գիտողութիւնը կը ներկայացնէր.

«Յօդուածագիրը մինչեւ Ալիշան կը հասցընէ վենետիկի մատնագրաց թիւը, եւ անկէ յտաջ չերթար, եւ Բաշալեանին, Շաւաղարի եւ Ավանեանի շամադադին(.) մէջ ընկղմելով, անկարող կ'ըլլայ յիշելու Ալիշանէն վերջը Ս. Ղազարի միաբաններու մէջ եղած ուրիշ հեղինակներն, որոց ամբողջ կեանքը նուիրուած է ի գարգացումն հայկական դպրութեան եւ մատնագրութեան»:

Եւ մեծարգոյ Հ. Երեմեանին համար որ այս տողերը կը գրէր, «հայ գրականութեան սիրահար արժանեակը(!)», — ես եմ, աւա՛ղ, այս խեղդատակ անուանակոչութեան ենթական, — մեղապարտ մոռցման այդ յանցանքը գործած է, պարզապէս որովհետեւ «անհկողմնակալ եւ ուղղադատ գրչէ զուրկ է»:

Նեղութիւնը պիտի յանձն չառնեմ բացատրելու Հ. Երեմեանին թէ Բաշալեանի, Շաւաղարի եւ Ավանեանի պէս դարգէտներու արժէքն անստեղծ, — բան մը զոր այսօր յետին ժամկէտը պիտի չհամարձակէր ընելու, — Ս. Ղազարի վանքին համար անօրմին է, եւ թէ այդ իրողութիւնը ինքնին, (եթէ զայն թանձր անհասկացողութեան մը չվերագրենք), Բազմալիպի քննադատն քով կ'ապացուցանէ գերաբաղական աստիճանով մը գոյութիւնը ճիշդ այդ «անհկողմնակալ եւ ուղղադատ» գրչի պա-

կասին զոր Հ. Երեմեան կը ձգտի վերագրել ուրիշներուն, Պիտի ըսեմ միայն թէ ուսումնասիրութեան մէջ վենետիկի Միխիսարեանց գրականութեան բաժինը Ալիշանէն ասդին չհարուսակելուս պատճառը պէտք է փնտռել ոչ թէ ո եւ է կողմնակալութեան մէջ — սրով հետեւ յիմարաբար կը սիրեմ վենետիկի վանքը եւ զայն ապացուցած եմ մէկէ աւելի առիթով, ուրիշներէ մինչեւ իսկ վենետկամոլութեան մեղադրանքն ընդունելու աստիճան — այլ միայն այն պարտականութեան մէջ զոր ունիմ ձշմարտութեան հանդէպ եւ որ զիս կը ստրկէ Ալիշանին վրայ կանգ առնել՝ երբ Ս. Ղազարի գրականութեան պատմութիւնը կ'ուրուագծեմ, եւ այդ ալ Միխիսարի հաստատութեան համար ունեցած յարգանքիս մէկ ապացուցն է նորէն, որովհետեւ եթէ Ալիշանէն ասդին Միխիսարեանց գրականութեան վրայ խօսէի, պիտի պարտաւորուէի անախորժ բաներ ըսել եւ հայրենակիցներուս վրայ չեմ սիրեր անախորժ բաներ ըսել երբ օտար հասարակութեան մը կ'ուղղեմ խօսքս:

Այո՛, յիմարաբար կը սիրեմ վենետիկի վանքը, եւ ինծի համար շատ հաճելի է որ առիթը կը ներկայանայ իմ ամենէն մեծ հիացումներէս մէկը բացատրելու: Այս բացատրութեանէն ինքեւ օգուտներն այժմեան միաբանութեան մէկ քանի անդամները որոնք այն աստիճան տարբեր են իրենց փառաւոր նախորդներէն որ վախճամ եւ ոչ իսկ կարող ըլլան խկապիս ըմբռնել անոնց գործը, եւ յայտնապէս պէտք ունին որ իրենց յատկօրէն ցուցուի թէ ի՛նչ եւ վենետիկի վանքը եւ ի՛նչ եւ այսօր:

Այդ Սկզբնական արքան որ թրքացած Փոքր Ասիային խառնալու խորհրդէն, հսկայ գաղափարի մը հետ միայնակ, հազար դժուարութիւններ կրօնով եկաւ Եւրոպայի մէջ ուսումնական միարանութիւն մը հիմնել հայ միտքը եւ հայ ժողովը վերանորոգելու համար, մեծ հայրենասէր մը եւ մեծ գիւնասցէտ մըն էր, այնքան հզօր ուղեղով որքան արտով։ Իրեն չափ մեծ մէկ քանի տոկարներ տուած է մեր ցեղը, իրմէ աւելի մեծը չեմ գիտեր։ Ինչ որ քրտն էին Սահակ, Մկրտչու Վստայուհի թագաւորը՝ Դ. զարուհ, Մխիթար նախը կրկնեց միմիայն իր անձնական ճիգովը. եւ չափազանցութիւն չէ ըսել թէ Մխիթարի ծրարագիրը աւելի ընդարձակ էր. տեսնելով հայրենի երկրին մէջ արող քաղաքական, մտաւարական, բարոյական մեղեւորութիւնը, Մխիթար կ'ուզէր, որոք երկրի մը ազատ պայմաններէն օգտուելով, գոնէ մտաւոր կիսնքի մը վերաբերածումը սկսիլ հայ ցեղին համար, ապահով որ այդ մտաւոր յարութիւնը ազդին ամբողջական վերանորոգմանը նախակարգուկտը պիտի բլլար։ Իր նպատակն էր հայ արդի միտքը հաղորդակցութեան գնել նախ իր անցեալին հետ, յետո՛յ եւրոպական ընդհանուր քաղաքակրթութեան հետ։ Կրօնաւոր մըն էր, կրօնական գաղափարները դեռ մեծ տաւրածում ունէին իր աստիճանը, եւ իր գործունէութեան մէջ կրօնական ձգտումը բնականաբար ամենամեծ բաժինն ունի (ինչպէս Սահակի ու Մկրտչի գործին մէջ)։ Բայց պէտք չէ այդ հանգամանքէն խորհել. իր առաջին քայլէն իսկ կարելի է զգալ որ Մխիթարի գործը «զուտ կրօնական» չէր. Մխիթար կ'ուզէր ազգին յաւուրացանքով ուժը նորոգել եւ բազմապատկել, ու կը հաւատար թէ կրօնական զգացման զարգացումը (եւ իր աստիճանը, Արեւելքի մէջ ամենաւաղը, ճիշդ էր այս գաղափարը) ամենակարգէր ստատուն էր այդ նպատակին հասնելու համար։ Սկսած Երզնկայի փոշիի մէջ կորուսած հին ձեռագրերը, որոնք ինչպէս ան անուն վանականները միայն ծառայէին անցած էին, եւ որոնցմէ, երբ ժողովուրդը զանոնք ճանչնար, պիտի յարնէին հայ ցեղին պատմութիւնը, լեզուն, գրականութիւնը, ամբողջ արդի հայ կեանքը։ Հիւսկեց կրօնական քերթումաները, շարաքերի նպակներն բառարան մը, յօրինեց հայերէնի քերթականութիւն մը, եւ պատմութեան իր աշակերտներուն որ հայ ժողովուրդին մէջ ուսումը,

ընթերցանութիւնը տարածեն, կարգաւոր գիրք տան անոր, զարգացեալներուն՝ գրաբար մասնագործութիւն մը, եւ հառարակ ժողովուրդին՝ աշխարհաբար (իւր առիճը աւելի կերպ չէր կրնար մտածել)։ Զգալով սակայն, — եւ ասի իր ճանաչարան ամենէն կարեւոր գծերէն մէկն է, — որ աշխարհաբար պիտի բլլար վերջ ի վերջոյ տիրական լեզուն, յանձնարարեց որ անոր քերթականութիւնը որոշագոյն, անոր բառարանը կազմակերպեն ու յղին, ինչպէս, անձամբ աւարտեց իմէն ինչ որ բրիտիշ յաջորդները, Ու. ճարդիկ, իր Հաստատութեանը գիրքը տեսական գործընկերու համար, կաթողիկոսութեան ընդունեցաւ. (որի՛չ կերպով չէր կրնար յաջողիլ Իտալիոյ մէջ,) Իտալական կատալոգութեան պաշտպանութիւնը պահելով իր վանքին՝ զայն տեսակ մը անկախութեամբ օժտեց, եւ իտալացի ման վաստակէն գլխ ապահովեց։

Ու այն աստիճանը, Վարպիտին պատրաստած այդ բեզմէ միջավայրին մէջ, երեսն ակուն այն վերխալի անհատականութիւնները, որոնք միւսնակի վանքին տուէր իր վերջնական, իր լիակատար, իր փառապանք նշանակութիւնը, — Զամկան, Ինճիճեան, Աւգեր, Բազարտունի, Հիւրմուշ, Ալիշան, Հայկուղեան յաւաքումը, զոր խումը մը Մխիթարեաններ կերտեցին, Զամկանի հայր պատմութիւնը, Ինճիճեանի հընարապական, աշխարհագրական ուսումնասիրութիւնները, Աւգերի լեզուագիտական ուսումնասիրութիւնները, Բազարտունիի եւ Հիւրմուշի մարպիտութիւնները, Ալիշանի բանաստեղծութիւնները, ամենէն հզօր արտայայտութիւններէն են հայ ուղեղին։ Մէկ հաւրածում, մեր ցեղը, այդ հսկաներուն չորսին, կը բարձրադարձ անոնէն քաղաքակրթ ազգերուն մակարդակին։ Մտաւորական ուժը զոր ցոյց տուած են Զամկանը, Ինճիճեանը, Բազարտունի մը կամ Ալիշան մը, գիրենք հաւատար կը կացուցանէ եւրոպական մտաւորականութեան ազնուաւոր զէմքերուն։ Մխիթար եւ իր անմիջական յաջորդները իրենց ձեռքով, ոչ ինչի ու պարպի մէջ, — որովհետեւ Հայաստանի վանքերուն, Պոստոյ կամ Թիֆլիսի մէջ այդ սկզբնական շրջանին միեւնոյն նպատակով չառարարած աշխատութիւնները, երբեք չափահան, բայց ընդհանրապէս աղօտ, անմիջական նախափորձք են լոկ, եւ ինքնին շատ ուշ պիտի կարենային ընդլայնուել եւ կատարել լազորութիւն եթէ Վենետիկ Մխիթարեանց

գործունեութիւնը իր շարժուցիչ փայլովը, գիտակից ու առեւակաւ զօրութեամբը, օրինակ եւ ցափալեր չհանդիմանար — իրենց ձեռքովը յօրինեցին հայ ժողովրդին համար պատմութիւն մը, աշխարհագրութիւն մը, քառաբան մը, եւ գրական վերածնունդի մը հիմքեր գրին:

Այսպէս, արդէ Հայտնութեան մտքին զուգացանքն ու մահապանդ եւրոպացեան գործին մէջ, Միխիթարեանից դերը առաջին լոյսով կը բռնէ, թէ՛ փորձառական կարգով հւթէ՛ կարեւորութեամբ, եւ մենէն նշանակելի քայլը զոր արին այդ հայրենասէր արտեւտագետները, լայնցնիւր եղաւ փոստըրապան արտադրութեանց շրջակայը, զոր մեր նախնիք բաց ի (մայրամբ) Որդեանցիկէն, կրօնական, միասնական պղծութեան մէջ տարամիւր փորէն սեղմած էին. արդեւորապէս ու գիւցաղական Իտալիան իր ոգին փոխանցեց մեր վառականներուն, եւ — արտադրողը երեւոյթով որ նոյն իսկ եւրոպայի մէջ հաղթապղծ է, եթէ ոչ անգոյ — այդ վանքի մարդիկը իրենց ոգիներն առն ունեցին ոչ թէ Ծրանուտաւ Եւրոպի մը կամ Ս. Թոմաս Ագոսինյանի մը հոգին, այլ Բեթլեարքայի, Տանթէլիւր, Նոյն իսկ Թաքոյի (եւ այդ երեւոյթին մէջ մեր ցեղին ազատ ու ըմբոստ ձգտումն, գեղեցկութեան ու կեանքի անկախանդ պատմութիւն մէկ ապացոյցը կարելի է փակել) Պահելով հանդերձ կոնական խորքը, որ իրենց էութեան հիմունքը կը կազմէր, այդ խորքին վրայ առնալով զոգոցն հայրենասիրութեան ու գեղեցկասիրութեան ամենէն շրջ ժողովները, (եւ Բագրատունիին ու Հլուրմիւզին համար, թերեւ զանձնիչ լըլլայ քսել թէ Գեղեցկութեան ու Հայրենիքի սէրը, արեւզօրէն հզօր, իրենց գործունեութեան, իրենց արտադրութեան մէջ քննելու չափ ստեղծեցեցեցած է այդ կրօնական խորքը) Աշխարհականաւորը «մարդկային» տարրը մտնուցին հայրականութեան մէջ, ամէն բանէ վեր գահեցին Գեղեցկին սէրը, ըմբոսնցին եւ նոյն իսկ ընդդիմացին հեթանոսականը՝ իր գեղեցկութեանը համար, Չառնեան պատմութիւնը, ա՛յնքան արարել մեր հին պատմագիտներուն միասնական, կրօնաբանական կամ եղբորական ու միշտ Աստուածաշունչով ստեղծուած ըմբռնումէն ու ոգէն, կը ներկայացնէ հայ Տիտուս-Լիվիոսի մը վեհալ քանակաւորութիւնը, հեղինակը — մեր երկրորդ անդրեանցին, անդրեանցի մը առեւի հասուն ու կա-

տարեւ — իրենց գլխաւոր նպատակ դնեցած է ապագային հայ ժողովրդին թէ՛ ան լնծ է եղած իր անցեալին մէջ, եւ յօրենած է իր Հայոց պատմութիւնը, որ ծայրէ-ծայր դիւցազներգութեան է քան պատմութիւն, եւ ուր հեղինակը կը ցուցնէ հայ ժողովուրդը յաճախ ոչ այնպէս ինչպէս եղած է իրօք, այլ այնպէս ինչպէս իր խորիմ ու վեհ հոգին — հասնակ Հոռոմայի — կը բաղձար, կ'երազէր որ եղած ըլլար ան հին պատմութիւնն ու մասնականագիտներուն յաճախ չոր ու տարապաղովութիւնը իր էջերուն մէջ կ'ընդլայնէր դասական պարճախօսութեան մը շունչովը, մերթնոյն իսկ կը ճոխանայ մտացածին հերոսութիւններով, ստեղծուած յաղթանակներով, երեւակայական մեծութիւններով. իր Հայերը հակառակահայ համաձայնութիւններ կ'առնէ, Ափլլէսեան ձեւեր ունին, Կիլիկիոյ ոգով կը ճառեն Այգ վիթիարի գործին մէջէն, արդի Հայտնութեան տեսաւ իր անցեալը մեծերուն մէջ մեծագոյն, անցեալ մը վեհապատ ու Հայկը, Արամը, Տիգրան Ա. թ, Վահէն, Արտաշէս, Տրդատ Բ. թ, Արգաթը, Տրգատը, Վարդանը եւ դեռ ա՛յնքալ գեղեցիկ մը հիմունք ժողովրդին արեւնին ու ծովին մէջ անցած են, կը ցցուէին առեւի հզօր ու գեղեցիկ քան ամենէն հոգեւաւոր հերոսները արեւելական պատմութեան եւ հայ ազգին կրօնային անցեալին մէջ ազգերուն մեծագոյնը եղած ըլլալու պատրաստը, Հայ ժողովրդին իրեւ ազգ վերանորոգութեան երեւոյթին մէջ Չառնեանի այդ գործին կատարած դերը անպակ, հիմնական, տիրական է: Անշուշտ անոր կը պատկեր մեր թագաւոր քաղաքականութեան կարգ մը սխալներն ալ (եւ մանաւանդ այն մեծապաշտութիւնը, Երականին ճշգրիտ զգացումն ունենալու անկարողութիւնը զոր ցոյց տուինք) պարզեւ չա՛յն վտանգաւոր յաճախորդութեանը զոր անխրակաւ մեծութիւններու հաւատքը կը բերէր, բայց միանգամայն անոր կը պարտինք: ամէն ինչ որ եւքայաօր, մեր բարձրացումը դարձաւ լուծի տակ արեւելադամէն, մեր ամբողջ այս գարտնէ մէջ ունեցած ձեւը տուած գէպ ի աշխարհացում, գէպ ի ազատագրում, գէպ ի մեծութիւն. եւ Թաքոյին ու Պարսկին դարապարհին տակ տափալկած, սմբած, սքանչելի որպէսզի ցնցուէր իր անկուսակ ու ոտքի կարողանալու իր իր գէպ ի լոյսը ցցուէր, այդ մեծ հպարտութեան, այդ խոշոր հաւատքի շէտը անհրաժեշտ էր: Չառ-

չեան եղաւ Բանաստեղծը որ հարկաւոր է որ պէտքի մնա՞ծ ցնդ մը վերկենցադէր արդի Հասարակական ստեղծողն է ան, — Արտիկանին հետ, որ ուրիշ ճանաչող, հուսալ ընդարձակ բայց աւելի կենդանի գործով մը, միեւնոյն դերը կատարեց ։ Ինձեանս ըրաւ Հայաստանի աշխարհադէրութեան համար ինչ որ Չամբեան պատմութեան համար ըրած էր ։ Իր ժամանակին մէջ թատերաւ, Ինձեանս ուսումնասիրութիւնը Հայաստանի հին ու նոր աշխարհագրութեան վրայ, կատարեալ գիշակամ գործ մըն է ։ Ու կարելի է ըսել որ Ինձեանս հիմնադիրն է մեր մէջ գիտական ոգւով ուսումնասիրութեանց, զոր յետոյ Վիննայի Մխթարեանը եւ ուստայ բանասէրները ստանձնեցին եւ ընդարձակ կատարելագործման մը հասուցին ։

Զմե՛ ծանրանար այն բաղամթիւ բառարաններուն վրայ զոր այդ առաջին Մխթարեանը յորհրդէր, սկսեալ Հայկազեան մեծ բառարանէն մինչեւ Մ. Աւգերի Առեւոն բառարանը, Յ. Աւգերի անդլո-հայ, ֆրանգո-հայ եւ ուրիշ բառարանները մինչեւ Նորայր Բիւզանդայիի հրատարակը, բոլոր այդ մեքենական աշխատութիւնը որ մեզի վերագուց մեր լեզուին կազմակերպումը եւ օտար լեզուներու եւ զբաղակալութեանց հետ մեր հայորդայեցութիւնը ։ Զմե՛ ծանրանար դարձեալ հայերէն հին ձեռագիրներու հրատարակութեանց վրայ ։ Կէս դարու ընթացքին մէջ, Վիննայի վանքը ամբողջ անցեալ մասնաբաժանութիւն մը վերակենդանացուց, ազգին տալով (հրատարակութեամբ մը որ անուշտ իր շատ մը թերութիւնները ունի՝ ինչպէս ամէն առաջին հրատարակութիւն) մեր հին հեղինակներուն պատմագրութիւնները, բանաստեղծութիւնները, մեկնութիւնները, թարգմանութիւնները ։ Կ'ուզեմ հասնիլ ամենէն փափուկ, ամենէն աղնուական, աւանդին թանկագին տարրին զոր Վիննայի վանքը արտադրեց, — «արուեստագէտ» տարրը ։ Բաղարատունի, Հիւրմիւլ եւ Ալեքան կերպուրանափոխեցին (կարելի է ըսել) մեր ցեղը, ու այն գեղեցիկ ու ստրուկ խոթանէն որ եղած է ինք մենք՝ Թուրքիոյ ապ, իրենց գործով եւ այդ գործէն ծնած գեղեցկագիտական բովանդակ շարժումովը, բարձրագոյն գեղեցկութիւններն ըմբռնելու եւ արտադրելու առաջ ժողովուրդ մը հանեցին ։ Աւելի լայն-նաճաշակ եւ ապամասիտ քան իրենց Ե. դարուն նախորդները, որոնք իրենց ժամանակին ոգւովը տոգորուած, յոյն ու սարբ

մտածման միայն կրօնական արտայայտութիւնը ճանչցուցին իրենց ժողովուրդին, Բագարատունի եւ Հիւրմիւլ հայացուցին Արեւմտեանը հին ու նոր դրակալութեանց ամենէն կարեւոր հրաշակերտները, առանց խաբի դներու քրիստոնէականին ու հեթանոսականին, աշխարհականին ու կրօնականին միջեւ ։ Ընդհակառակն, ակներեւ ձգտում մը կը գտնենք իրենց ժողովրդի քիւրա, ազատ, մարդկային Գեղեցիկը, եւ կարծեմ թէ ու եւ անպատկառութիւն չենք գործեր այդ երկու աղբիւր ու մաքուր գէմբերուն յիշատակին հանդէպ եթէ յայտարարենք թէ անոնք ամէն բանէ առաջ Հեքանուսեր եղան, ։ Հելլեններու «առաքիկեան» ոգին թրքական ազդեցութեանէ թանձրացած, ապուշացած, լըճուած մեր ժողովուրդին մէջ ներարկեցին ։ այդ է իրենց մեծ ինքնապաշտութիւնը եւ արժանիքը ։ Գեղեցիկին սէրը տարին մինչեւ այն աստիճան որ քրիստոնէական վանքի մը ամօթխածութիւնը արհամարհելով, առանց ու եւ յայտարարեցին իշխաններ, նոյն իսկ իր այն հատուածներով ուր Արամազդը, «անոյշ փափաքէն» բռնուած, կը ձայնէ Հեւրային ։

Անգղեր քուսնել երթիցուք, դե քաղցրացան (քեզ անկողինք ...) ու Վերգիլի Հովնուրգակալին, ուր Կորնելիոս վեր կը հասցնէ Ալեքան «չքնաղաղեղ» պատանիին համար (կուստիպալ Հ. Երեմանին օրովը այդ հրաշակերտները թերեւս մալուած հրատարակուէին) ։ Իսկ այն կատարելութիւնը որուն հասուցին հայերէն լեզուն, ոճը եւ տաղաչափութիւնը, մեր ցեղին աշնուականութեանը ամենէն չեղ յայտարարներէն մէկը կը կացուցանէ ։ Պէտք պիտի ըլլար ուրոյն ու մանրամասն ուսումնասիրութիւն մը նուրիւր վերլուծելու համար այն գեղեցկութիւնը զոր Բագարատունին ու Հիւրմիւլի զբերին մեք լեզուին, մեր զբաղակալութեանը, մեր ցեղին, իրենց գրաբար, նուազ աղբիւր, նուազ մաքուր քան Սեչիկինը կամ Սալմոսներու թարգմանութեանը, աւելի ճոխ է, աւելի բաղամաստը, աւելի նուր, զմայելի կերպով ձկու ու կենդանի, դասական վեհութիւններուն միացնելով ուսման իսկ կենդանութիւններ ու մինչեւ իսկ (մանաւանդ Բագարատունիին մէջ) «տէքստան» տարօրինութիւններ ու նրբաւորութիւններ ։ եւ զարմանալի է որ այդ արտայայտութեան հրաշազան գործը ձեռքերէն ունենալով, հին հայերէնին այդ վերջին ու վերագոյն արուեստ

տաղէտները գծակամակած ըլլան աշխարհաբարն
ընդունելու իրբու գրական լեզու՝ այնպիսի ա-
տեն մը ուր աշխարհաբարը անկերպարան, կո-
պիտ ու գոհելի կործայ մըն էր գեռ. եւ ատով
կը բացայայտէր նորէն որ նոյն իսկ Միսաք-
եանի պէս գրող մը, որ աշխարհաբարին ձեւա-
կերպինն բնէն ու վարպետներէն մէկը եղաւ, իր
բանաստեղծութեանցը համար անհրաժեշտ նը-
կատած ըլլալ, Հիւրմիւլիին ու Բաղդատունիին
լեզուէն հմայուած, գրաբարին դիմել։ Ու ինչ
կարելի է երեւակայել աւելի վեհանձնորէն
գեղեցիկ քան այն «հայկական տաղաչափու-
թիւնը», զոր Բաղդատունի ընդշնարեցնախ.
նեաց կշառուր արձակին մէջ՝ գոր ինքը կազ-
մակերպեց ու կատարելագործեց, եւ որ իր
մարտդուրութեանցը մէջ եղաւ տեսակ մը վակ-
ներեան քերական ու հօր համանուագ,
Հալովիալ այլը հրացայտ, պարսլայ ոլորս

Նոսասյրծօճեալլեզու չըլէրսոյ լէրգալ սողուկէր
Առ թաթստոցգեղեցիկ կուսին իկերպ ալաչաւ

Իսկ Հիւրմիւլի գաշնակաւոր հոգիին մէջէն
լամարթիքեան, վիշգիլեան քաղցրահոտութիւն
մը դարձաւ, յաւիտեական արբեցութիւն
երաժշտամոլ մտքերուն, Արեւիկ լուսաւէտեւ դալարիք
դիւրիշք ինչինջ, եւ որքանօր անէն ըզձեռք կանաչագիւ
թուփք [նովանի,
Յերեսաց հեղեղակաց լերուք խաշին պատբու-
պարան,

Ամառն ահա դայ բոցակէզ, ուռնուն իրողարթ
պլտուկնք ի յուռ,

Ալիշանը, նուազ դատական, նուազ արուես-
տագէտ, նուազ կատարել քան իր երկու
անթերի նախորդները, աւելի ինքնատիպ եւ
դաւ, աւելի ստեղծող, աւելի «բանաստեղծ»
Արտակարգ, անգուպ, անսանձ հայերէնով
մը, զոր Նախկիցայիէն կ'առնէր եւ ա'լ աւելի
քամալաց ու խալական կը դարձնէր, ամենի
ու վեճ չուշնով մը զոր մարգարէներուն մէջ
միայն կրնանք գտնել, մոլիգին, սարսուղին
թոխով մը որ Պայրընն ու Շիւլէրը կը յիշե-
ցնէ, Ալիշան երգեց, մէկ քանի քերթուած-
ներու մէջ որոնք ա'լ յնքան աստի պիտտեւեւ
որքան մեր ցեղը տեւէ, Հայրենիքը, Բնու-
թիւնը, Երկինքը, Աստուած, եւ Հոգին որ Բա-
նաստեղծութեան իսկութիւնը կը կազմէ եւ
կեանքին վերեւ կը հողաթիւն, եւ դիւցազնա-
կան հրապոյրը մթին ինքնագոծութիւններուն
ու խորհրդաւոր գեղեցկութիւնը Ասալին
Ամոլին կուսական տալիանքներուն,

... եւ լոյս լուսնի զնասարակաւ փարէր գիշերով.
եւ խաղաղ մահիկն յառաջատան կայր ի
[գըրէթ,
եւ նուազէր ձայնն հաւուն ի ծառոյն կենաց
եւ հազ ընդ հազ հատալէր հեղեղըն հեռաւոր,
եւ հաղիւ հոծիւն օդոյ մնդոյ գրկէր զայցիւր
եւ հանգչէր բնութիւն համատարած յանգրուր

Եւ գիշերապահ ճեմէր զուարթնեան յամալան
[Ալիշան
կենտառուին բարամբընով շուրջանակի
եւ ջուրն քաղցրիկ որորայր յանձնել լար բու-
[տուեաց,
եւ էր հանգիստ եւ մէր կատարեալ անմահ
[մարդկան
Ընդ մորձ աստեղամբը հովանոցածեւն ասա-
[գաստի,
Ընդ որով նընջէր կուսանսիրոյն քուսն կու-
[տական,
Ճանոյզ գրգռարանն ի քնագաւառն Հայաս-
[տանայց,

Չլատանալով բարձր քերթութեան ուր ա-
մենէն վեհ կատարներուն հասաւ, Ալիշան ու-
զեց քնքուշ, սիրուն, ժողովրդական լարն ալ
հնչեցնել, եւ գրեց իր պարզուկ, միամիտ
բայց այնքան գունալից ու կրակոտ Յուլի-
անը, եւ Նախկիցայի երգեւն աշուղեց ուր Ման-
գուր, Վարդանը, Աշոտ Երկաթը, Մասնաներն
ու ինքն իսկ փշապակ Հայրենիքը իրենց
ամբողջ կեանքովը խառցած՝ կ'աղբին
ու անթառած բարբառով մը կը խօսին Յետիւ
«երգիկէ» յոգնած, նուազ թանկագին, նուազ
բարձր ու նուրբ, աւելի գրական գործ մը
ոտանձնեց. «նկարագրիկ» Հայրենիքը. եւ յորի-
նեց իր տեղապարկան մեծ հատորները, որոնք
գիտական աշխատութիւններ ըլլալ կը ձգտին
եւ ա'լ յնքան իսկապէս, ա'լ յնքան միամտօրէն
ու քնքշօրէն բանաստեղծական են։ Ալիշան
համադրութիւնը եղաւ ամբողջ վեհեմոկ վան-
քին, իր գործին մէջ նիւրաշնակեց ամէն ինչ ու
ըրաժէն իր նախորդներն ու ժամանակակից-
ները՝ Չամչեանէն մինչեւ Բագրատունի, Ինճի-
ճեանէն մինչեւ Հիւրմիւլ, եւ իր գէժքը, ամենէն
պաշտելիներէն մէկը զոր մեր ցեղը ար-
տագործ է, վեհեմոկ վանքին ամբողջ գեղեց-
կութիւնը կը խորհրդապատկերէ։

Այս բոլոր գրաւոր արտադրութիւններէն
զատ, վեհեմոկ վանքը տուաւ ազգին նաեւ
կենդանի արտադրութիւններ, — Մուրատ-Ռա-
փաշէլեան վարժարանին աշակերտները, Այդ
աշխարհական Միսթարեանները տարածեցին,
հանրացուցին, ընդարձակեցին, լրացուցին
իրենց վարպետներուն գործը, Հէգիմեան,

Պէշխուրեան, Մեհերեան, Մամուրեան, Թէր-
զեան, եւ անոն զղակի կերպով՝ Տէրոյնէն,
Մխաթեան եւ Օտեան, այդ զիւցաղնական, եւ
զասական ոգիին, այդ հայրենասիրական եւ
զեղեցկասիրական ձգտումին ծառայիչները
եղան ժողովրդին մէջ, եւ հործնելով, ապրելով
ժողովրդին հետ խառնուած, զասականը հետըզ-
հետ իրականին մօտեցուցին, զիւցաղնագո-
թեանէն յետոյ թատերադու թիւն, ժերթուածէն
յետոյ վէպ, ճառէն յետոյ քրոնիկ հիմնեցին,
միշտ պահելով առաւել կամ նուազ՝ օմաստ-
նաձեւը՝ ընթացքը, հետադարձան պշտանքը,
զասական տարիանքը զոր ստացած էին Մխի-
թարեան զատկարարութենէն, եւ, զբարա-
բէն յետոյ, յօրինեցին, յլեցին, զեղեցկա-
ցոյցին աշխարհաբարը, զբական աշխարհաբարը
զսոյ ունինք, այսօր, աշխարհաբար մը որ եթէ
ոչ նոյննք, գէթ նոյնպէս նուրբ ու շքեղ
եղաւ որքան Բայրատունիներու ու Ալիշան-
ներուն գրաբարը։

Այդ ամբողջ ըստական երկար ժամանակա-
միջոցին եւր Մխիթարեանները աշխարհ զե-
ղեցիկ գրքեր եւ աշխարհ հոյակապ աշխարհաբար-
տի կուտային ազգին, Վինետիկ վաղբերական
դակ Հայոթեան համար Մատուրականիկոյնը,
Գեղեցկութեան Վառարանը դարձաւ։ Ազգին
բոլոր կուտակցութիւնները, բոլոր հատուած-
ներուն ու դասակարգները պատկառաւորով կ'ար-
տեսուէին Վինետիկ վաղբին անունը։ Նոյն իսկ
մեր կաթողիկոսականները, լուսաւորչականքի եւ
կաթողիկոս պաշտարին ամենէն թիւ օրերուն,
միշտ կը խոտովանէին թէ Վինետիկ Մխի-
թարեանները կաթողիկոսներուն ամենէն Հայերն
էին եւ Հայերուն ամենէն ներպացեալները։ Իր
Վարպապ վաղբէն ուր Արժուի վասպուրաւորանին
կը հրատարակէր, իրիմեան, զիտ այն տանն
վաղցի բանաստեղծ մը լոկ, խորին մեծա-
րանքի տողերով ուղեւթ մը կը զրկէր Հ. Ար-
սէն Բագրատունիին, վարպետին, Կրտսէր որ
Մրովան իրեն մտաւորաբար ունէր Մխիթարը,
եւ պահ մը փորձուեցաւ Վինետիկ երթալ ու
միաբանութեան մէջ մտնել Մխաթեան, Պլուսոյ
Հայոթեան արտադրած ամենէն մեծ գրագէտը,
խաղաղաւոր հիացող մըն էր իր փոխդիր Դուր-
եան կը բաղձար Պէշխուրեան մը բլլալ։
Սե պէտք կ'աշ բացարկել թէ մեր արեւմտեան
Հայոց արդէ զրականութիւնը գրեթէ ամբող-
ջութեամբ կը կազմուի աշխարհ տարրերով զոր
բերին այդ Մխիթարեաններին եւ իրենց աշա-
կերտներն ու հետգործները, — Ալիշանը, Պէշխու-

թաղեանը, Թէրզեանը, Մեհերեանը, Մատուրեանը,
Մխաթեանը, Օտեանը, Մխիթարեանը, Ջօհարաւորը,
Ալաճեանը։

Հայ ազգին հանդէպ կատարած այն զերին՝ Վե-
նետիկ վաղբը կը միացնէր զեր մը աւելի ըն-
դարձակ, ան կը ներկայացնէր Հայոթ թիւնը եւ
շատ փաշտելի կերպով, Եւրոպայի Մատուառ-
բապէս Իտալիոյ, Ֆրանսայի եւ Անգլիոյ մէջ Ս.
Ղազարի ակադեմիան եւրոպական ամենէն ծա-
նոթ ու յարգուած հաստատութիւններէն մէկը
դարձած էր։ Եւրոպացի արեւելագէտները հայ
ազգին վրայ ու եւ ճշմարտութիւն ունենալուն
համար վաղբին կը զիմէին, հայաստանները
վաղբը կ'երթային հայերէն սորվելու։ Ան-
Մատեան, Լը Վալանտ ար Ֆրոնտիւայ, Տիւրոյնէ,
Լանկուա, Վինետիկ Մխիթարեաններուն ա-
ջակցութեամբ ու աշխատակցութեամբ եւ
տարեցին իրենց բազմաթիւ ուսու մտաւոր-
թիւնները Հայոց հին ու նոր պատմութեան
վրայ, եւ հայ հին հեղինակներու իրենց Փը-
րանսիէն թարգմանութիւնները։ Պաշարն, իր
խաղած հոգին հանդարտեցնելու համար,
վինետիկ վաղբը կ'երթար միաբանութեան
հետ Հայոց վրայ իտալու, հայերէն լեզուն
անոնցմէ սորվելու։ Իր քարեկամներէն մէկուն
ուզողտ համակցի մը մէջ, մեծ բանաստեղծ սա-
պէս կ'արտայայտէր իր զգացումը վաղբին ու
հայ ազգին նկատմամբ։

«Այս միաբանութեան անդամներուն քա-
ղաքագրութեան, հանդարտամտութեանը,
անեթեանի քարեկամութեանը, սիրալիր
բնաւորութեանը, յատուկութեանն եւ ա-
հագրութեանները կարող են աշխարհի մարդ
մը առ համարման բերել թէ ուրիշ բան մը
կայ, լաւագոյն քան մը կայ, նոյն իսկ այս
կենտրոնի մէջ։ Այս մարդիկը կղերն են այդ
հարստասիրակ եւ ազնիւ ազգին որ իջեա-
նորուն եւ Յոյներուն պահպանալանին ու
զերութեամբ բացառելի եղած է առանց ա-
ռաջխնայութեան յամառութիւնն ու վարչիւնն
բոլոր արեւելացիներու անհնաւոր...»

Եւրոպայի բոլոր մեծ անձնաւորութիւնները,
վինետիկ անցած ատեններն, պարտք կը հա-
մարէին Ս. Ղազարու վաղբը այցելել, եւ այցել
լիլ ոչ թէ, ինչպէս այժմ, իբրեւ հետաքրքրա-
շարժ մարտաւանդութիւն մը, այլ իբրեւ եւ-
րոպական համբաւ վաղբող մեծ հաստատու-
թիւն մը։ Վաղբին «ստորագրութեանց տեա-
րակ»ին մէջ նաբողոն Գ. կայսեր, Թիէսի,
Լամարտիէն, Կալէսի իշխանին եւ զիտ շատերու
անունները կան։

Մամուէլ—Մուրատեան վարժարանի Բարիդ
փոխգրեւոր, Մխիթարեանը աւելի մեծ ու

չեղի չըջանի մը մէջ մտցուցին Հայութիւնը
Եւրոպայուց ճանչնչելու գործը : Մուրատեան
վարժարանը ծանօթ ու սիրուած անկիւն մը եղաւ
Բարիդի մէջ, Հ. Ս. Թէոդորեան, յետոյ Հ. Ալեքսան,
որ զարդոցին տնօրէնութիւնը կատարեցին ան-
բաղդատելի ուշիմութեամբ եւ հեղինակու-
թեամբ, Բարիդի մտաւորական դասակարգին
համակրութիւնը սերտեալ կապեցին իրենց
հաստատութեանը պարզեւարարչութեան հան-
դէսներուն Համարի ինի պէս Յրանապցիւնի կը
նստադասէին Հոս չեմ ծանրանար այն պատկե-
տութիւն վրայ — ախր մանրամասնութիւն այս
դիպելով համապատկերին մէջ — որով Մխիթար
եանց մէկ մասը, Այվազովսքին ու յետոյ Նարայի
իրենց գլուխ ունենալով, բաժնեւեցան միւս-
ներէն, Լուսաւորականութեան դարձան եւ
Հայկազեան վարժարան մը հիմնեցին, որ չկրցաւ
սուսել եւ Մուրատեան զարդոցին վնաս հասցը-
նելէ եւ Ներքին կողմէն յարուցանելէ
դ սու ուրիշ օգուտ չունեցաւ : Բայց Այվազովս-
ք եւ Նարայէյ, անձնապէս, իրենց մտաւոր
աջնակարգ յատկութիւններովը, իրենց
արժը զարգացմամբն ու հմտութեամբը, բա-
րեզեան գրական ու գիտական շրջանակներուն
մէջ մեծ յարգեցեալ վայելեցին : Նարայէյ Լա-
մարթիին, Հիւկոյի հետ մտերմական յարա-
բերութիւններ ունեցաւ եւ երբ Այվազովսքի
դէպ կ'Ռուսաստան պիտի մեկնէր, Բարիդի
Ասիական ընկերութիւնը տուաւ անոր Ռուսիոյ
կայսեր ուղղուած յանձնարարական տեղեկա-
գիր մը (որ հրատարակուած է ժողովուրդի թիֆլիս
մէջ) այնքան ներշնչուած է ժողովուրդի թիֆլիս
մէջ Հայ ընդունած է եւրոպական մեծ ակում-
բէ մը : Եւ եթէ Նարայէյն Գ. ըսաւ օր մը
Հայոց համար թէ՛ «Փոքր-Ասիոյ այդ փոքրիկ
սոցիոլոգի մեծ ապագայ կը խոստանայ», այդ
խոսքը Մխիթարեաններուն այս մտքով գոր-
ծունէութեանը արդիւնքն էր ամենամեծ մա-
սամբ :

Չեմ ուզեր սակայն որ կարծութի թէ արդի
Հայութեան կազմաւորմանն ու դաստի-
րակմանը գործին մէջ ամեն քան վեներեակի
վանքին կը վերագրեմ, Արդէն գրած եմ*) թէ
ի՛նչպէս Արտիման, եւ իրմէ յետոյ Նազարեանց,
Նալբանդեանց ու Բաղմի, լրացուցած են, ու-
րիշ աշխատութեամբ մը, Մխիթարեանց գործը
(եւ այս առիթով չեմ կրնար բացատրել ո՛րքան
անիրմաստ կը գտնեմ այն փոքրուսոյց ու չնոր-

հազուակէ աններողութիւնը որով հիմակուան
Մխիթարեանները — ժառանգորդները միշտ
աւելի գոռոզ կ'ըլլան քան իրենց հայրեր որ
իրենց աշխատութեամբ դիրք ու անուն չինե-
ցին — կ'ուրանան իրենց վանքէն դուրս ու եւ
մեծ արժանիք «ո՛ւր Մխիթար, ո՛ւր Արտիման,
ո՛ւր Մխիթարայ գործն, ո՛ւր Արտիմանի»,
կը գրէր Հ. Ս. Երեմեան Արտիմանի նուիրած
յօդուածն առիթով, չըմբռնելով որ Արտի-
ման մը, իր մէկհատիկ վիպասանութեամբը
եւ իր մանկավարժի պարզ գործունէութեամբը
կրնայ, թէպէտ սահմանափակ, բայց նոյնիսկ
կարեւոր դեր խաղացած ըլլալ, քանի որ
նարեւոր եւ Արտիման մը կը լեցնէ, որ-
քան Մխիթար մը իր ընդարձակ ու խոշոր
հիմնարկութեամբ, իրենց ամբողջ գործունէ-
ութեանը մէջ, Մխիթարեանը, հակառակ իրենց
ողի, ճաշակի, ձգտումներու ընդարձակութեան
եւ ազատութեան, «վանքի», «գլուխ», «գրքի»
աղիցցու իւրերը կը պահէին : Վերջապէս «վա-
նականներ» էին, մեծ մասամբ Պոլսէն, հայրենի
երկրին անձամբ անձանօթ, Հայաստանն ու
հայ ժողովուրդը գրեթե մէջէն տեսնող, եւ
ժողովուրդական կեանքէն անջատ, իրենց աշ-
խատութիւնը գրասենական աշխատութիւն մը
է, ուղիղի արատաւորութիւն մը, Պէտք չէ մոռնալ
որ Ալեքսան, Հայաստանի ամենէն մանրակրկիտ
նկարագրողը, Հայրենիքին ամենէն խաղաղամտ
կրկնը, երբեք չէ զսլացած այնքով ձեւերը
այդ երկրի Մխիթարեանց աշակերտներն ալ,
Պէշիքիսի շրջանէն մինչեւ Մեքենայ, Հէքիմանէն
մինչեւ Նոյն ինքն Մամուրեան (բայց ի Արտի-
արեանէն որ թէպէտ Մուրատ-Մափայէլեան
վարժարանի աշակերտ, Մխիթարեաններէն շատ
քիչ աղիցցու իւրեր կրած է եւ Փրանսական
լրագրութեան եւ ռուսական գրականութեան
աղիցցութեամբ կազմուած է) «գրական» մտքեր
են, ուղիղային դաստիարակութեամբ, եւ աւելի
Եւրոպացի եղած են քան Հայ, աւելի Հայը
եւրոպացիելու նպատակով են քան հայ ցեղին
ինքնուրոյն կեանքը, պոյնը, չեւտը գրակա-
նութեան վերածելու մէջ քան Ռուսաստանցի
պարտինք, — եւ Թըքանայ մէկ քանի գա-
ւառական գրողներու, ինչպէս Սրուանձտեանց,
Տեւկանց, եւն, Մխիթարեանք մեզի բերին
մարդկային բարձրագոյն արուեստը, եւրոպա-
կան ոճը, դասական հայրենասիրութիւնը, մարդկային
թատերամարմին վրայ մեծ դեր մը
խաղալու հրաւէրը, եւ հին Հայութեան տես-
լականացիւ վերակոչում մը : Ռուսաստանցի

() Ըստ մեծագործ թիֆլիսի, Արտիմանի վրայ, «Արտիման»,
Գ. Բ. Բ.

ժողովրդի մարդիկ, ժողովրդին մէջ կազմուած եւ ուղղակի ժողովրդին համար աշխատելու ձգտող, ընդունելով միասնականացն ազդեցութիւնը դերմանս-ոռու օգտապաշտ, իրապաշտ դատախարակութեան, մեղի առւին մեր հայրենիքին եւ մեր ժողովրդին արդի կացութեան «Իրական» պատկերացումը, այդ կացութեան վերանորոգման դրական միջոցները վնասեցին եւ ջնանքից ցուցնել, կազմակերպեցին լրագրութիւնը, իրապաշտ վէպը, ժողովրդական ու ձգտունաւոր բանաստեղծութիւնը, ընդգրկեցին մանկավարժական նոր մեթոտները, «հայ» եկեղեցիին, «հայ» աւանդութիւններուն, վերջապէս գլուտ «հայ» տարրին ներկայացուցիչները եղան՝ մինչդեռ Մխիթարեանք «կաթով կ ու եւրոպական հայութիւն մը» կը ներկայացընէին, ու ճարտասանական, պատմական եւ գիւնդեցիական հայրենասիրութեանը հոնդղէ՞ որ էր Մխիթարեանքը, յեղափոխական, գործն, կենդանի հայրենասիրութիւն մը քաւորեցին: Երկու հոսանքները՝ այսօր միացած ու խառնուած՝ կը կազմեն Հայոց (մասնաւոր թըգահայոց) արդի դրականութիւնը, եւ ընդհանուր ազգային զործունէութիւնը: Այդ երկու հոսանքներէն, ինծի համար, առաջինն է կարեւորագոյնը՝ եւ հոս՝ Ռուսահայք ալ (նաւրսեան, Ա. Երեցեան, եւն) գործած են Մխիթարեանք նկատմամբ միեւնոյն անիրաւութիւնը՝ զոր հիմակուան Մխիթարեանները կը դրծեն Արմեանի մը եւ իր յաջորդներուն կատարած մասնաւոր բայց հսկայ գործին նկատմամբ Ռուսահայք, ընդհանրապէս, լոկ դեղեցիկ ժամանակավրէպ մը նկատած են Մխիթարեանք գրականութիւնը, անոր անմիջական օգտակարութեան պակասէն զայն անիւմատ եւ անկենդան կարծիով: Ռուսահայոց բերած տարրը անհրաժեշտ էր որպէսզի Հայոց մտաւորական, բարոյական ու քաղաքական վերանորոգման աշխատութիւնը կարենար իր ամբողջական ձեւն գգնեալ, բայց Մխիթարեանք գործը աւելի կարեւոր է, նախ որովհեւ տեւ ընդհանուր թմբութեան մէջ ան եղաւ զարթման առաջին նշանը տուողը եւ ան ներշնչեց ու յարուց նոյն իսկ ոռւսահայ շարժումը, երկրորդ՝ որովհետեւ Մխիթարեանք գործունէութիւնը աւելի ընդարձակ, աւելի նուրբ է, եւ՝ ճիշդ «ուղեգային» ըլլալուն եւ համամարդկային գեղեցկութեան մը կնիքը կրելուն համար՝ աւելի բարձր է:

Ահաւասիկ ինչ որ եղած է անցեալին մէջ Վենետիկ վանքը անցեալ մը իրօք շատ ծանր՝ ժառանգորդներու ուսին համար, երբ ատոնք ժառանգորդներ ըլլան եւ ոչ թէ յաջորդներ: Հիմա ինչոք է գիտնալ թէ այսօրուան Մխիթարեանները յաջորդներ են: Եւ կը կարծիմ որ ժառանգորդներ են միայն՝ եւ ատոր համար է որ Ռոյլի Անդիլոյթեթիկ ուսումնասիրութեան մէջ Ալիշանէն յետոյ անուն չգտայ նշանակելու:

Եւ երբ Ալիշանէն յետոյ «անուն» մը կ'ըսեմ, չեմ հասկնար Ալիշանին հաւասար անուն մը, ալ «գրական անուն» մը որ արժանի ըլլայ յիշուելու: Միաբանութիւն մը՝ նոյն իսկ ժողովուրդ մը, չի կրնար ամէն օր Ալիշանին, Բագրատունիին կամ Զամչեանին պէս մտքեր արտադրել: Բայց միաբանութեան մը կամ ժողովրդի մը կենսականութիւնը ապացուցանելու համար անհրաժեշտ պայմանը մեծ տաղանդներու երեւումը չէ՝ ալլ նոյն «ճիգին», նոյն «աւանդութեան», նոյն «գործին» շարունակումը գիտեցութեամբ ու խանդով, Արդ, այս դարուս առաջին կէսին մէջ, Վենետիկ վանքը առաջնակարգ դիրք մը ունէր, իթէ ոչ առաջինը, ազգին մէջ՝ այսօր, ազգին «կենդանի կեդրոնները» Թիֆլիսը, Պոլսը եւ Վիեննան են, մինչդեռ Վենետիկը՝ լոկ ստուեր մը իր անցեալին: Թիֆլիսի մէջ, Արտվեանէն, Բաքիէն ու Քասախ-Քաթիպալէն յետոյ Շիրվանշաղէ, Լէօ, Փափագեան եւ Յովհաննիսեանց շարունակութիւն մըն են, Պոլսոյ մէջ, Պէշեքթաշլեանէն, Միսաքեանէն, Մամուրեանէն, Օսեանէն եւ Դուրեանէն յետոյ, Մասիս-Հայրենիքի խումբը շարունակութիւն մըն է Վիեննայի վանքին մէջ, Գաթրեանէն, Գարաքաշեանէն եւ Այսնեանի յետոյ, Տաշեանը, Մենեվիշեանը, Քաթմեքեարեանը շարունակութիւն մըն են: Վենետիկ վանքին մէջ այսօր ոչ ոք չի տեսնում որ Զամչեանին, Բագրատունիին, Ալիշանին աւանդութիւնը շարունակ է Վենետիկ վանքը այսօր դարձած է հայ ժողովրդին վրայ ազգային, ուսումնական կամ դրական ու եւ ազդեցութիւն գործել:

Գիտեմ որ Վենետիկ վանքին մէջ կան հիմա անձեր «որոնց ամբողջ կեանքը նուիրուած է ի գարգացումն հայկական դպրութեան եւ մասնաւորութեան», ինչպէս կը գրէ Հ. Երեմեան. բայց «ամբողջ կեանքը հայկական դրութեան գարգացման նուիրելը», եւ ձեռնարկուած գործին մէջ յաջողիլը, իւրաքանչիւր բաներ են: Գիտեմ որ վերջին շրջանին մէջ

Ալիշանին զատ վառքը ունեցաւ. Հ. Զարահաւ նշխան մը, որուն «Հայ մատենագրութեան պատմութիւն»ը իր տեսակին մէջ առաջին աշխատութիւնն եղած ըլլալէն ուրիշ ո եւ է արժանիք չունի, Հ. Բարեղ Սարգսեանը, որ ժամուռ եւ աշխատասէր մտքը մըն է՝ առանց գիտական մեթոտի եւ առանց ինքնատուութեան, Հ. Մանուէլ Քաջունին, որուն «Գիտութեանց բառարան»ը չանկեան է գովելի ձեւը նարկ մըն է, բայց հետո՛ք՝ անխելի ու վերջնական գործ մը ըլլալէ, Հ. Դաւիթ Նազարէթեանը որ Տանթէի մէկ քանի հրգեր թարգմանած է ողորմելի գրաբարով մը, եւ մէկ քանի երիտասարդ գրողներ որոնք թարգմանութիւններ, կենսագրութիւններ կամ բանասիրականներ հրատարակեցին, շատ բարեկամեցողութեամբ եւ բնաւ տաղանդով Գրիտմ որ Բազումիկը ջանքեր կ'ընէ գրական ու բանասիրական բարձր թիւք մը ըլլալու եւ ուրիշ բանի չի յաջողիր հասնիլ բայց եթէ՛ գրական մէջ՝ ծիծաղելի ըլլալու, իսկ բանասիրականին մէջ՝ Վիեննայի Հանդիսին մէկ յոռի ընդօրինակութիւնը, Մուրադ-Ռաֆայէլեան վարժարանը իր առջի փայլուն ու նշանակութիւնը կորսնցուցած է, տգիտ ու սերունդներ կ'արտադրէ, եւ այն յիշատակը զոր կը տանին հիմակուան աշակերտները այդ պարագին, շատ տարբեր է խանդավառ տղաւորութենէն զոր Պէշեք-Մաշիկեանը, Թեքեանները եւ Արփիարեանները բերին անկից, Հայութիւնը Եւրոպային ճանչցնելու գործը ուրիշներ կը կատարեն այսօր, եւ Մխիթարեանը ալեւս ոչինչ—կա՛մ գրեթէ ոչինչ—կ'ընեն այդ ճամբով, Ուրիշ բան չի մնար վանքին մէջ բայց եթէ Ալիշանը, որուն գոյութիւնը դեռ «փառք» մը եւ «փայլ» մըն է այդ հաստատութեան համար, բայց Ալիշանը, որ երբեմն «ներշնչող» մըն էր, այսօր «հաւաքող» մըն է լոկ, եւ իր սքանչելի ծերութիւնը կա յոգնեցնէ, ապշեցուցիչ աշխատասիրութեամբ մը եւ խանդով մը, այնպիսի աշխատութեանց մէջ զոր իր աշակերտները կրնային կատարել եւ պէ՛տք էր կատարէին, եթէ իրեն արժանի աշակերտներ ունենար։

Անկուրմ անուրանալի է, Ինչ որ կը շարժի այսօր ու կ'ապրի վանքին մէջ, «ստացուած արագութեան» մէկ խիստ մնացորդն է, Հայ-կապուռ ուրիշ խումբեր, ուրիշ ընկերակցութիւններ, ուրիշ հաստատութիւններ քաղցին կէս դարէ ի վեր, ու կը քայլեն միշտ Վիեննայի վանքը իր հոյակապ ընթացքին մէջ որ մը

յանկարծ կանգ առաւ, եւ այդ կատարմը կը տեւէ դեռ Դժուար է այս կատարմին պատճառը բացատրել, Ես կը կարծեմ թէ Հ. Ալիշանովսքին ու իր ընկերներուն բաժանումը Վիեննայի միաբանութիւնէն, առաջին հարուածը առաւ. կարեւոր տարր մը առով կ'արդարաւոր Մխիթարեան մարմնէն, եւ այդ անջատումն իսկ ինքնին՝ մարմնի տկարանալ սկսելուն մէկ նշանն էր թերեւս Դէպք մը սակայն որ աւելի խորին ազդեցութիւն ունեցած ըլլալ կը թուի Վիեննայի Մխիթարեանց գիրքին խախտման տեսակէտով, այն ձախաղ որ որոշումն է որով միաբանութիւնը Մուրադեան վարժարանը Բարեղին Վիեննայի փոխարեց, Բարեղի պէս կեդրոնի մը մէջ ունենալով տեսակ մը մասնաճիւղ, Մխիթարեանց անհունապէս օգտակար կ'ըլլային Հայութիւնը Եւրոպացոց ճանչցընելու տեսակէտով, եւ միանգամայն իրենց ալ կ'օգտուէին այդ բարձր միջավայրին ազդեցութենէն (Դպրոցը Վիեննայի փոխադրուելէն վեր Բարեղի հալածական շարժումը զգալի կերպով հուազած եւ տգիտեմ է)։ Վերջապէս, կարծողներ կան, եւ ես անոնցմէ եմ թէ այդ բաւարար պատճառներուն մէջ կարեւոր տեղ մըն է այժմեան Մեծաւորը անձնապէս. իր նախորդը, Գեր. Գեորգ Հիւրմուշեան, Հ. Եղուարդ Հիւրմուշեանին եղբայրը, «գրագէտ» մըն էր, եւ ամէն բանէ առաջ՝ սիրող գրականութեան եւ արուեստի. անոր նախորդները նոյնպէս գրական անձեր եղած են, Գեր. Կիրեղեան շատ ուշիմ ու գործնական միտք մըն է, փայլուն ելումը տագնա մը. ինծի հաւատած են թէ իր ընտրութենէն ի վեր վանքը շատ հարստացած է. չիտեմ որ բազմաթիւ ու բերրի կալուածներ ունին հիմա Մխիթարեանը Լիտուի մէջ, եւ Իտալիոյ ուրիշ կողմերը. պիտեմ որ Վիեննայի լուսագոյն կաթիլ կը ծախեն, եւ բրինձի վաճառականութեան մէջ առաջնակարգ տեղ մը կը բռնեն. բայց Գեր. Կիրեղեան «գրական» միտք մը չէ, ոչինչ արտադրած է, եւ նոյն իսկ ոչ մէկ սպաքոյց տուած է գոնէ «գրագէտ» մը, «հաւակցող» մը ըլլալու. եւ շատ հաւանական է որ իր ազդեցութիւնը բաժին մը ունենայ վանքին արդի «գրական» անկումին մէջ, ինչպէս՝ ճիւղ հակառակը՝ Այսնեանի պէս գիտնականի մը Վիեննայի վանքին գլուխը գտնուելը ճակատն պատճառներն մէկը եղած է այդ վանքի գրեթէ բարձրացմանը, Հարապայցնել վանքը, շատ հասկանալի եւ շատ գովելի ջանք մըն է, եւ Գեր. Կիրեղեան կրնայ գնահատուել իրիւս մասակա-

բար, ասկայն Վենետիկի վանքին պէս հաս-
տատութեան մը գեղեցկադիտական նշանա-
կութիւնը պահպանելու համար մատակարար
մը չէ բուսեմ, որպէստեղ մը պէտք է:

Միևեան մեծ նշաններէն մէկը հետեւեղաւ-
թեան ձգտումին զարգացումն է: Վենետիկի
վանքը որ առաջ կ'ադրէր ազգին ամէն հա-
տուածներուն, մինչև եւ իսկ իր հակառակորդնե-
րուն վրայ, հիմա կը հեծել: Կը հետեւի Վե-
նետայի վանքին, ճղնելով բանասիրական ու
պատմական ուսումնասիրութեանց մէջ անոր
հետ մրցիլ, եւ շատ վար մնալով անիկոյ, Հիմա
սկսած է հետեւիլ նոյն իսկ Պոլսոյ կամ Թիֆ-
լիսի մամուլին, հրապարակաբար փորձը
ընելով Բազմալիպին մէջ՝ Հ. Սրեմեանին նա-
խաձեռնութեանը, փորձելը որոշեց, աւա՛ղ, չա-
փազանց անճարակ են: Սխալութիւն ատեն մը
ուր դիւ ոչինչ կար ազգին մէջ, կ'ըմբոսնէ որ
Վենետիկի վանքը ուզած ըլլա՛յ ընել ամէն բան,
կրօնական, գիտական, գրական, պատմական,
զեղարու ետական ճիւղերը միասնաբար մը-
շալել: Բայց այսօր հայրական նորմանը կեդ-
րոններ կազմուած են, եւ աշխատութեան բա-
ժանումը յառաջ եկած է: ամէն խումբ պէտք է
իր գործը տեսնէ, փոխանակ միջնակօրէն կըրկ-
նելու ինչ որ Վենետիկի միաբանութիւնը մա-
գիտութեամբ կը կատարէ, փոխանակ Պոլսոյ
կամ Թիֆլիսի մամուլէն փոխ առնելու դեր մը
որ բնաւ պատշաճ չէ Ս. Ղազարի վանքին,
Վենետիկի միաբանութիւնը պէտք էր իր ուժերը
գործածէր այնպիսի աշխատութեանց որ նը-
պաստէին պահպանելու իր բոլոր նշանակաւորները,
իր ամէն բանէ առաջ հայրենասիրութեան եւ
գեղեցկադիտութեան վստահանի զիրքը: Վե-
նետիկի վանքը պէտք է մեզի գրադէտները, ա-
րուեստագէտները տայ. պէտք է իրենց ցկոյր
խորագէտ ճանչցող ու եռանդաւոր սիրող սե-
րունդներ հասցնէ իր Մուրատեան դպրոցէն,
եւ պէտք է շարունակէ իր պաշտօնը՝ Հայու-
թիւնը Ներսիսային ճանցնելու: Սեյգ է իր
կրօնումը, այդ է իր գոյութեան պատճառը, եւ
առանց ատոր՝ Վենետիկի վանքը ուրիշ բան
է՛րբար այլ եւս բայց եթէ անուն մը ըլկ:

Ոչ մէկ ատեն այնքան զգացելու Վենետիկի վան-
քին անկուսի որքան 95-97ի հայրական ազէտ-
րուն շրջանին: Սեյգ արեւուն, անիկոյ, վտան-
գի, ջրի, օրերուն, երբ ամէն հայ անհատ
կամ խումբ դէ՛ն առէ՛կ իր կրցածը փորձեց ազ-
գին օգտակար ըլլալու համար, երբ ա՛յ յնքան
օտարների մեր խնդրովը զբաղեցան միմիկին:

Ներով, գրեթեով, յօդուածներով, ի՛նչ բոլաւ
Վենետիկի միաբանութիւնը, ա՛յն միաբանու-
թիւնը որ մեր լեզուն ու պատմութիւնը վեր-
ստեղծած, հայրը զի ցաղներգած, նախալիքի՛ն եր-
գելը հրաբխաւ, Մուշկիները թրթռացուցած էր,
— Վենետիկի միաբանութիւնը չուց, Օ՜հ, չպիտի
պահանջէ՛ր որ ծայրայեղ ցոյցեր, իրենց հա-
ցութիւնը վտանգող աբարձներ փորձած
ըլլային Ս. Ղազարի Միսթարեանները: Բայց
ձա՛յն, ք, ճի՛կ մը... գոնէ սուգի ե՛րբ մը...
ի զո՛ւր սպասեցինք որ գէթ նախալիքը ողբ
մը լսելի ընէր Բազմալիպին մէջ, կակիծի շնչոտ
մը որ ապացուցանէր թէ վանքին սիրտը միշտ
կենդանի է ազգին վրայ բարախուռ: — Ոչինչ, և
եւ ինչ որ միակ անձ մը, սքանչելի Ջանչեանը,
ըրաւ իր Վալսթրական օգնութիւնը՝ հաւաքա-
ծոյովը, ամբողջ Վենետիկի միաբանութիւնը չմը-
տածեց ու չկրցաւ կատարել — մինչդեռ ատի վա-
քին գործն էր գերադասապէս եւ վանքը կրնար
առանց վտանգի այդ գրական ու մարդասիրա-
կան արտայայտութիւնը ձեռնարկել: Ու նոյն
անձը Նուպար փաշա, Սասունի գէզգէն
խմի՛րապէս չեղող իր նուիրաւորութիւնը զրկեց
վանքին՝ առաջարկելով որ միաբանութիւնը հը-
րատարակէ Հայուն անցեալն ու ներկան Ներո-
սիին ճանչցող գործ մը, Վենետիկի վանքը չորս
դարի սպասեց, եւ հայրական խնդրոյն Ներսիսային
մէջ յարուցած մեծ յուզումը անցնելէն շատ
շուտ, օր մը մասնաւորապէս, աշխարհագրա-
կան գրքի մը, Սիւրուսինի, Փրանսերէն թարգ-
մանութիւնը հրատարակեց, հրատարակութիւն
որ աննշմարելի անցաւ եւ բացարձակապէս
ապարդիւն, որովհետեւ ոչ մէկ եւրոպացի
հայտնի կամ հայազգեց անիկոյ օրինակ մը
չէր գտնուցաւ, ու ոչ մէկ լրագիր կամ հանդէս
անով չըզբաղեցաւ: — Եւ մինչդեռ Միսթարեանը
այսպիսի կենսական դերի մը մէջ այսքան
թուլութիւն ու անընդունակութիւն ցուցու-
ցին, անդին՝ իրենց Հ. Շնտոյեանովը սպասցու-
ցին թէ ուրիշ ճամբով հիմա սկսած են փաշ-
լիւ: Հ. Շնտոյեան վաշի մէջ միջնորդի դերը
կատարեց ձրանաացի կրօնաւորներուն եւ հայ
ժողովրդին միջեւ, զնեղու համար սովալլուկ
Հայերու դաւանութեամբութիւնը՝ պատառ մը
հայրիփոխարէն, միւր բակներ անհեղով անհոցմէ,
որպէս սղի վերջէն հայ եկեղեցւոյն զիրկը
դաւանութեամբութիւնը դատի կանչուին... Միսթ-
արեանները, իրենց ամենին հայրենասէր
օրերուն իսկ, կարողիկ եղած էին միշտ, ան-
կեղծօրէն կաթիլիկ՝ դատարարականութեամբ:

ողի ուլ, զգայնութիւնամբ եւ ճաշակով եւ ասկա շատ բնական էր. միայն թէ՛ երբ ազգին Ողորդն ապառնալու տաղանակներ ծագէին, անոնք միշտ իր զգացմէն թէ աւելի Հայ էին քան կաթիլը ի Պապն իսկ գերեմը ապալէս կը ճանչնար. եւ ասի իրենց փառքն էր: Հ. Զնտոյանն կ'ապացուցանէ թէ այսօրուան Մխիթարեանն երբ աւելի կաթիլիկ են քան Հայ: Չեմ կարծեր որ Չարհան կամ Բագրատունի Հ. Զնտոյանին կատարած դերը յանձն առնէին:

Գալով Վինետիկ վանքին գրական կադու թեանը, իստի տարիէ ի վեր այդ վանքը ուրիշ բան չէ արտադրած բայց եթէ Ալիշանի տեղագրական հատորները, որոնք աւելի իր օրինակն կարեւորութիւն ունին քան իրեն գրականութիւնն: Եւ այդ նոյն ժամանակաւ զոցին՝ Բազմալիկին մէջ ուրիշ բան չեմ գիտի որչափութեան արժանի բայց եթէ Թէրզիանի մէջ քանի գմայելի քերթուածները: Եւ Ալիշանն ու Թէրզիան «հին օրերուն» մարդիկն են Առնցիմէ դուրս՝ ոչինչ:

Աշխարհաբար զոր Բազմալիկը կը գործածէ, ամենէն յոռին է այսօրուան, նոյն իսկ միակ յոռին. Վինետիկ Մխիթարեաններ, որոնք Ալիշանեանով՝ աղբէն կենսական դեր մը խաղացած են արդի հայերէնին կանոնաւորման մէջ. կը գործածեն աշխարհաբար մը առնալով կանոնաւոր որքան չնորոշէին: Պոյսց ըստ թերթերը այսօր ունին միեւնոյն մարտի, կանոնաւոր, աշխարհաբար: Վինետիկ մէջ է միայն որ կը տեսնուի, անճաշակ, մաքրաբանի աշխարհաբարը, զոր Բիւզանդի Քէչեանն անգամ («Պ գործ») մէկգրէր զրած է:

Տարիէ մը ի վեր Բազմալիկը զգալի քանք մը կը հոգընէ վերանորոգուելու: Երեսօտարը Մխիթարեան մը, Հ. Արսէն Ղազկիւհան, վերջերս ձեռնարկեց Տանթէն աշխարհաբարի թարգմանի, ինչպէս եւ Միլիթ-Բոթանով, Յըրանտա Պարթէն քերթուածները, այս ձեռնարկը, Վինետիկ վանքին պաշտօնին եւ աւանդութեանը ամենապատշաճ, միակ ինքնատիպ եւ իրապէս ուշադրաւ երեւոյթն է Վինետիկ վանքին այս վերջին բովանդակ շրջանին մէջ: Բայց ազգականակն ալ գնահատելի է միայն իրեն ձեռնարկ, մինչդեռ անոր գործադրութիւնը սխալ ըմբռնումի մը վրայ կը հիմնուի եւ մեջակ արդիւնք մը տուած է: Հ. Ղազկիւհան «չուգիւղով», «գաննիով», «ակամայ» կը թարգմանէ: «Տանթէն» աշխարհաբար: Կը գրէ Տանթէն անպիմն երկին թարգմանութեանը նախաբանին մէջ, ո'վ գիտէ քանինք պիտի

զայնակիլն եւ ինքս արդեօք յանձն կ'առնուի» (կ'առնէի, իսկ կ'ուզէ) երկու տարի անաջ ընել այդ փորձը զոր կ'ընեմ արդ: Ոչ ապաքէն եւ ալ սրբազորութիւն պիտի հաճարէի այսպիսի ձեռնէրեց զանգիւղութիւն մը: Այնպիսի տոնն մը ուր ամբողջ հայ ազգը, Վինետիկն ու Էվփանայ վանքերն ալ հետ ամենիւղով, այլեւ աշխարհաբարը վերջնապէս ընդունած է իրեն գրական լեզու, դեռ զգականութիւն եւ արհամարհանք ցուցնել աշխարհաբարին համար՝ կ'ապացուցանէ ցաւալի յետամնացութիւն մը: Եւ զորք մը որ տակաւին չէ ըմբռնած թէ որչափ ալ գաւաբի գերագանց եւ հոյակապ լեզու մը ըլլայ, աշխարհաբարը ունի իր ուրիշ գեղեցկութիւնները, բայց ի կենդանութեան գերագոյն գեղեցկութեանն աշխարհանձ մը բնականաբար չի կրնար աշխարհաբարը գործածել հարկ եղած ճարտարութեամբն ու շնորհով: Հ. Ղազկիւհանի Բագրատունին տաւ զայսպիսի կանոնները ու չի ունի ոտոված լլայկը թուի, իրտողը լաւ չեղանած են բայց լլայկն (ուր, բաւական յաջողած տողերու հետ, սաղաւ ձեւեր կան) «Եւ շատեր նստուց ի վերայ յոթին», «Ապրեցաւ ձողովս ալ լաւ Օղոտեաւ», «Բայց դու է՞ր դատնս յայդ անտաղծնայ», «Իւր ազգն ընդ Ֆելքոն ու Նոյ Ֆելքոն պի՛ ըլլայ» (պիտան) աշխարհաբար մըն է: Եւ ապա չութեանի տեսայ որ Արիարեան Հ. Ղազկիւհանի թարգմանութիւնը «կորովալի ներգալնակութեան միանոյլ զանգուած մը (!)» որակի էր եւ Հ. Արսէն Ղազկիւհանն «աշխարհաբար Հ. Արսէն Բագրատունին» մը ունաւրու եղնակաւորութեան զաւելտական զաւաքարը ունեցեր էր: Բագրատունինն ու Հ. Ղազկիւհանին միջեւ տարբերութիւնը արմաղ յարմար ուղի գտաւ. համար, թարգմանութիւններն յետոյ կը յանձնարարու ըլլոր թարգմանիկներուն որ կարեւոր Մխիթար տեղաւոր կենսականակն քերթուածը, զոր Հ. Ղազկիւհան կը հրատարակէ ատենն մը ի վեր Բազմալիկին մէջ: Ինք կարծեր որ Բագրեղ Էքսէճեանին անմոտանալի Դուլեանի կենսագրութեանը վեր, այսպիսի հրապարակած ծիծաղալարութեանն յիշատակարան մը երեւած ըլլայ հայ ազգին մէջ, տեսակ մը տեսքն է, որ տեղ տեղ տարատմարէն կը յիշեցնէ ան երգերը զոր թանապանի պիշիւրներ թափառիկ թափառներ կը պոսան Պոյսց փողոցներուն մէջ՝ Տիւնիկիլին ընկերակցութեամբը: 4՝ ընդօրէն

(*) Մեծաւորի մը նամակները, «Նոր կեսեր», 15 օգոստոս:

նակեմ մէկ ջանի տուն, եւ անոնք իմ բոլոր բացատրութիւններէս աւելի աղէկ պիտի ցուցնեն արտասովոր թոճափութիւնը այս քերթումին ։

... Հոն ցուցուց Մխիթար եղբայրական սէրն Որ իւր սրբախնայ մէջ արմատէր ձրգեր ։ Մէջն այն սրբախնայ զոր բերաւ Յիսուս Յերկիւի ի յերկիր կենաց յոյս ու լոյս ։ Փոխանակեց իր ուսից ձին Մխիթար Անոր գրաստին հետ անգոր, ապկար ։ Հնծաւ ու անցաւ գետէն անվորտանոց Յովնան վարդապետն ու ելաւ ցամաք ։ Մխիթար անոր գրաստնով անգոր ինքոր միջնաւ ջրերուն ի խոր, Ձկնըրկով զէմ զընէն հասարկին, Բակըսաւ իշնալ ողորմելի ձին ։ Մխիթար թափեց ջնաղ ու ճիգ ամբա-վեր ատուղ զանի, եւ անի փրկութիւն Հա Ռոմին չլուանի, ու ձին քըշուեցաւ, ինքը մնաց ի ջուր հանդերձ համեաւ ։ Բակըսաւ լողալ Մխիթար անհարալ, Նորէն յետ դարձաւ ելաւ ի ցամաք ։ Ձի գետ կէսն անգամ հասած չէր գետոյն Որ մըռնչելով թաւայլեր փրկորուն ։

Այս գրաստին պատմութեան վրայ կանգ կ'առնեմ ։ Մարդ այլեւս սիրած չի կրնար ունենալ չարութեան իւր, երբ կը խորհի որ ինչպիսի «Ս. Ղազարոս վանքին» վրայ է ։ Եւ արդէն կը կարծեմ թէ Հ. Ղազարի վանքի այս քերթումին զորն իր թաղէ՝ Վնեստիկ վանքին արդի գեղեցիկ գիտական կացութեան իրեն աստիճանադաս ։

Վերականգնող անկողն մը ուրիմն ։ Չեմ կարծիր, եւ չեմ ուզեր, չեմ կրնար այդպէս կարծել ։ Վնեստիկ վանքին պէս հաստատութիւն մը պիտի մըն է մեր ժողովրդին համար, մեր ազգային գործարանատնութեան ամենէն կենսական անդամներէն մէկը կը կազմէ ։ Անոր տկարացումը ազգին բարոյական կեանքին համար նուազում մըն է ։ Ոչ միայն Մխիթարեանները, ոչ միայն հայ կաթողիկէ հասարակութիւնը, այլ ամբողջ Հայաստանը փախաբեղու է, եւ ջանալու է, որ Վնեստիկ վանքը իր նախկին գերբը վերադառնայ գտնէ ։ Աստու համար սակայն անհրաժեշտ է որ նախ Մխիթարեանք իրենց արդի կացութեան ճշգրիտ գագաթնին ու նշանն ։ Հիւանդ մարդ որ որեւէ քննադատութեամբ չի կրնար բուժուիլ, որչափ ալ ուրիշներ յորդոր ու դարման չուսնեն, եւ ինքն իր թուիլ թէ Մխիթարեանք իրենց անկուսիքն որոշ գիտակցութեամբ չուսնին Հ. Երեմեանը ինքզինքը արարել ։

մը կը կարծէ... ապագայ հակառակորդները) երեւակայելով, դանտը առաջուց կը շանթաւ հարէ լատին «անտով» Վնեստիկ ճանձնեղով չի գրադիր ։!!! Այսպիսի ինքնախաբուլ թիւններով, բուժումը կը վախճաւ որ դժուար լինայ ։

Մեծ առողջ ճիգ մը պէտք է, մեծ ազատ կամք մը, արմատական վերանորոգում մը, վնեստիկ Մխիթարեանները պէտք է որոշապէս հաւոգոր ին թէ անօթի Հայաստանցիները կաթողիկայանելու եւ բրինձի կամ կաթի վաճառականութեամբ փայլելու մէջ չի կայանար իրենց դերը Մխիթար այդ վանքը հիմնից որպէսզի հայ ազգը անկից լոյս, կանաթ, գեղեցկութիւն ընդունի ։ Եւրոպայ «Ակադեմիա» անուանեց այդ հաստատութիւնը, պէտք է որ Ս. Ղազարի վանքը վերստին դառնայ Ակադեմիա մը, աւրուեստի եւ գրականութեան տաճար մը ։ Երբեք ուղղութիւնը փոխելուն մէջ է, ուսման չին որ կը պակսին ։ Ես ու եւ կանխակալ կարծիք, ու եւ նախապաշարած չունիմ. թերեւս նոյն իսկ Հ. Երեմեանը եւ Հ. Ղազարիանը «նրեկայանալով» գրագէտները ըլլային այսօր, եթէ ուրիշ դաստիարակութիւն մը, ուրիշ քաղցեցութիւն մը կրած ըլլային ։ Եւ հոն ամբողջ երկրասարգողութիւն մը կայ հիմա, ապագայ միաբանութիւն... կը բաւէ որ գիտականց ճայն մը բարձրանայ վանքին մէջ, կը բաւէ որ վանքը յիշէ եւ ըմբռնէ իր անցեալը, եւ այդ սերունդը որ պատրաստուելու վրայ է, ապագայապէս պիտի տայ Ալիշաններու եւ Բագրատունիներու ճշմարտ յայտններ ։

Ո՛րքան գործ կայ մեր մէջ դեռ չկատարուած, եւ զոր Վնեստիկ վանքին պէս հաստատութիւն մը միայն կարող է կատարել, եթէ ուզէ եւ գիտնայ Հին ու Նոր դասական հրաշակերտ հեղինակներ հայերէնի թարգմանութիւնը կատար իրենց նախակերտ, ստիպողական պէտք մըն է ։ Ինչ որ Բագրատունի եւ Հիւրմուշ ըրին գրաբարով, այսօրուան Մխիթարեանները պէտք է որ կրկնեն աշխարհաբարով ։ Վանքի կեանքը հին ու Նոր լեզուներուն հմտութիւնը կատար իրենց եւ դասական գրականութեանց բնականօրէն կ'ընալեցնէ իրենց միտքը ։ Կը բաւէ որ «կայծ» ունենան որ անհրաժեշտ է որպէսզի մարդ կարենայ, առանց մասնելու, թարգմանել Հնդկութեամբ կամ Մոփրիկէսը, եւ իրենցմէ է որ պիտի սպասեն յոյն-լատին գրականութեանց մեծ էջերը՝ արուեստագէտ ճշգրտութեամբ կանո-

նաև որ աշխարհաբարի մը թարգմանում է ,
 այս անգ ապառ սողորով կաս նոյն իսկ արձակ
 (տասնաութներեւ լաւագոյն) թարգմանում: Թիւն
 ներք արձակ թարգմանում թիւննոր հն) աշխար
 սի հրատարակութիւնից շարք մը Կենտրին վան
 քին առնեն անկողնուս (նախնորութիւն ներքին
 սկզբ պարի բլլար, Հին մասնաշարուն թիւն
 ներքին յետոյ , պարի ձեռնարկէն եւրոպական
 նոր գրականութիւններուն կարեւոր գրքերը
 հայացնելու : Ենթիւնն ու Ուրբանոսէն յեւ
 տոյ , պարի ձեռնարկէ իրենց շարքի հայերէն
 Տարիք մը , Սերվանթէս մը , Շէքսպիր մը ,
 Ռասին մը , Սփիլերի մը , աշխարհը կենսա
 գրական ու գրական ու ստեղծարարութիւններով
 ընկերացում է :

Ատկից զատ, Վենետիկի վանքը կրնար ձեռնարկել ուրիշ աշխատութիւն մը, նոյնքան կարելորդ — աշխատութիւն մը զոր ձեռնհերքել եւ անձնուէր անխտանել, ինչպէս է. Խորէն Ստեփաննի, սկսան կատարել, — այն է աշխարհաբարի վերածել մեր ախանջաջ հեղինակութիւնները : Խորենացին , Եղիշէն , Աղաթանգեղոսը , Բիւզանդիը , Լատին վերտացին , Լատիներուացին , Շնորհալըն , Եսայեկացին՝ թալլված ուսած այժմեան աշխարհաբարին , ի՛նչ ծառայութիւն մը պիտի ըլլար հայ ժողովրդին աշխատեցուած , ինչ այդ աշխատութիւնը , ամբողջական ու վերջնական ձեւով մը , Վենետիկի վանքին միաբանութիւնը կրնար կատարել լաւաւագոյն կերպով քան որ եւ յուրիշ խումբ մը :

Յետոյ, վենետիկ վանքը պէտք էր հրատարակէր նախնեաց ձեռագիրներէն մնացած բազմաթիւ անտիրույթներ, մանաւանդ ըստատեցծաւ կաննիներ, որոնք պատմականներէն եւ վարդապետականներէն նուազ բազդաւոր եղած են մինչեւ հիմա՝ հրատարակման սեռակէտով և երկու տարի առաջ, երբ պատիւ ունեցայ Մէլիթթարի հաստատութիւնն այցելելու, տեսայ ինն հազարի թիւով ձեռագիր Տաղարաններ, Գանձարաններ, Ոսկեփորկներ, որոնց մէջ ԺԳ. ԺԴ. ԺԵ. ԺԶ. ԺԷ. դարերու կրօնական, զրուցարանական, նկարազարդման գրաքար բաւատեղծութիւններ եւ ռամիկ լեզուով հին սիրային երգեր, Ժողովրդական տաղեր կան ամենամեծ մասամբ անտիր և Հայակկան քըւնարին այդ ամենէն սիրուն ու ինքնուրուպ արտայայտութիւններէն մաս մը Ռուսահայեր միայն փորձած են հրատարակել և վենետիկ վանքը կրնայ Հայոց հին բանաստեղծութեան այդ նշխարներուն ամբողջական

հրատարակութ իւն մը ձեռնարկել , հարկաւոր
ծանօթագրութ իւննեքոյ հանդերձ :

Չեմ մոռանար որ Վերնսկիի միաբանութիւնը «կրօնական» ընկերակցութիւն մըն է . ընդհանրական, կ'ուզէի որ Միխիթարեանց աւելի ուշադր աւելի խորունկ կերպով յիշէին այդ կէտը, եւ զայն զգալի ընէին իրենց արտազգրութեանցը մէջ Ալեքան, ատենով, իր Նելսէնին տակ լսելէ ըլլաւ միաբերական պահանջել խումբներ, եւ իր Տէրմուխին մէջ՝ մէկ թարի վսեմ օրհնելոյնքն: Երէկուան վանքը Քարաքանանց զրաքարով, Յիսուսի նմանութիւնը, Պոսէէի Դաւթանականը, Միխտնի Դրախ կոտուսակը, եւ: Ս . Ղազարի վանքը կ'ընար շարունակել նուիրական յուզումներ, այդ հոգեկան ստեղծագործութեան աւանդութիւնն ալ . իրենց զ'այլիկ կ'զգայաէին մեզի համար ո՛րչափ զաղք պիտի ըլլար լսել երբեքն, մեր աշխարհիկ կեանքին տեղադրուած մէջ . Հոգին նուարները որ կը խաղաղեցնեն, Անհունի ծայները որ կ'աղնուացընեն, Սիրոյ խօսքերը որ կը մխիթարեն — Բայց այժմ է որ իրենց ալ չմոռանա թէ Հայն եւ, ին է իրենց գործը եղաւ, երէկ, Հայկիւն ու Վարդանին Աստուծոյն թեւերուն տակ, Հայ Աստուծոյն օրհնութեան խաղաղ տակ ապրող մարտնչաւոր, տառապալի Հայ ժողովրդին Գերթուածը կ'զգէ և թող երգէն իրենց պաշտօնը, իրենց իսկութիւնը իրենց նշանակութիւնը հոն է . եւ մեր խեղճ ժողովուրդը , իր սուգին ու անծկութեանը մէջ , անհունական պէտք ունի մաքուր, կազդուրիչ, նորոգիչ նուազեցում: Թող ձգեն լրագրական կիւնիքը՝ աշխարհական մասնութին որուն պաշտօնն են ատենը, թող ձգեն զնշակալն աշխատութիւնները Վիեննայի միաբանութեան աշխարհական մասնազգէտներուն սրտը դրած է այդ — Իրենք, Ս . Ղազարի վանականները, թող իրենց գերազոյն գործն ու հրաշքը համարին Գնդկցութեան քաջիւն, Նորի մատուակ ըլլալ իրենց ժողովուրդին , — պայմանով որ Միխիթարէ զըրաքարն պատմութեանն տարբեր բաներ երգեն եւ տարբեր ձեւով, Այն ատեն ամբողջ Հասութիւնը խաղաղատապին երախտագիտութեամբ պիտի նորէն խոնարհի Վերնսկի Տաճարին առջեւ:

Այն երկրասարգ արեղաները որ վաղուան Մխիթարեանները պիտի ըլլան, այս տողերը կարդալէ յետոյ, թող վարկիտան մը կ'անգ առնեն Վանքին մեծ նբբանյքին պատը ծածկող հին Մխիթարեաններու պատկերներուն առջեւ:

Թող նային անոնց վեհապահն, ազնիւ ու խո-
րին զէմքերուն, յետոյ թող ելլեն պատերէն
դուրս ու գիտեն իրենց պաշտելի բոյնը պա-
շարող դիւթական, սրովբեական, մազնխա-
կան բնապատկերը, — Վենետիկեան անբազ-
դատելի երազանկարը, — եւ ապահով եմ որ
զիս պիտի հասկնան :

Ահաւասիկ ինչ որ ես կը մտածեմ, կը զգամ
ու կը մտղթեմ Վենետիկ վանքին համար, —

իս՝ ամենէն խոնարհ եւ ամենէն խաւովառ
հիացողը այդ վանքին, եւ այսօրուան
միաբանութեան մէջ եթէ գտնուին անձեր
որոնց յօդուածն անախորժ կարենայ գալ, ես
գիտեմ մէկը որ ինծի համակարծիք է որոտնց,
եւ ախ մէկը որ ամպերուն մէջ կը բնակի
հիմա, Միսիթար կը կոչուի :

ԱՐՇԱԿ ԶՕԳԱՆԵԱՆ

ԵՐԿՈՒ ԶԵՐԲՈՒԱԾ

ՀԱՆԳԻՄՅԻ ԻՐԻՖԱՆԻՆ

Բոլոր խարտեաչ իշխանուհիները պորփիւրէ պալատներուն,
Տօնի հրկայն վերաբերուներով,

Ապրիլի կէսօրի մը մէջէն,

Իրենց արծաթէ կողովները ծաղիկով լեցուցած,

Այցեւելութեան զացին գիւղի անձկոտ ազգատներուն :

Գիշեր մը ամբողջ անհունօրէն,

Հիւանդներու քով հակեցի .

Ու անտառին մէջ թափառող բոլոր կոյրերը,

Երկրագածաբար, այս իրիկուն,

Մարմարէ եկեղեցին առաջնորդեցի :

Թիպարտները ամայի պարտէզին մէջ կը պտտին,

Իրենց շղթաները լուսնին տակ հընչեցնելով,

Ու քաղցրօրէն, սահող ց'տերու կը խորհին,

Ձննձուած կանանչ դաշտերու,

Ու մայրերու որ իրենց ծաղիկներ ու լամբար մը կը պատրաստեն . . .

Հեռաւոր ջուրի մը եզերքը քանի մը զագաղ գամեցին,

Յաւիտենական ասկի մուրճերով ինչդութեան :

Ու կարծեմ թէ բոլոր գթութեան քոյրերը

Ճերմակ կտաւներ կը կարեն,

Անձրեւի իրիկուն մը,

Վրանք մը տակ, ուր վիրաւորուածներ նայուածք նայուածքի կը քնանան . . .

Մտախուղին մէջէն գառուկներու խումբ մը անցաւ,

Որ հիմա, տխուր, դէպ ի պանդանոց կ'աքսորուի,

Անդամահատող անմեղ, պայծառ տղաքներու ճիւղով . . .

Ու բարեկամներս թունաւոր ծաղիկներ քաղեցին,

Իմ հեռաւոր գերեզմանս զաբաղելու համար :